ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2022 թվականի N 1514 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐ, 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 8-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականին հերթական գյուղատնտեսական համատարած հաշվառում (այսուհետ՝ ԳՀՀ) անցկացնելու, ինչպես նաև դրա նախապատրաստման և անցկացման աշխատանքներին օժանդակելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետությունում հերթական ԳՀՀ անցկացնել 2024 թվականի հոկտեմբերի 11-31-ը ներառյալ:

2. 2024 թվականին հերթական ԳՀՀ մեթոդաբանական, կազմակերպական հարցերի, տվյալների հավաքման եղանակների և դրանց մեքենայական մշակման ծրագրերի ու գործառույթների փորձարկումն իրականացնելու համար փորձնական

ԳՀՀ անցկացնել 2023 թվականի հոկտեմբերի 11-31-ը ներառյալ, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային մշտադիտարկման դաշտում ընդգրկված՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթապի և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Բամբակաշատ ու Նոր Արմավիր բնակավայրերում, համապատասխանաբար, շուրջ 2325, 1040 և 340 անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններում՝ ընդամենը 3705 տնտեսություն:

3. Ստեղծել Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականի հերթական ԳՀՀ աշխատանքներին օժանդակող՝ ԳՀՀ նախապատրաստման և անցկացման հանրապետական, Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովներ և հաստատել դրանց կազմերը՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

4. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականի հերթական ԳՀՀ նախապատրաստման և անցկացման հանրապետական հանձնաժողովին ներկայացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի հերթական ԳՀՀ նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշիվը:

5. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարներին ու Հայաստանի Հանրապետության մարզպետներին և առաջարկել Երևանի քաղաքապետին ու համայնքների ղեկավարներին համակողմանիորեն օժանդակել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեին Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականի հերթական ԳՀՀ նախապատրաստման և անցկացման գործառույթներում (սահմանված ժամկետներում ԳՀՀ անցկացման ժամանակավոր կադրերի թեկնածուների ներկայացման, ժամանակավոր աշխատանքային գրասենյակների տրամադրման և այլ հարցերում):

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ